

ներ, յղկիչներ եւ այլ արհեստաւորներ»։ Ասիկա կրնայ բացատրուիլ մինակ սա կերպով, որ բերուելիք արհեստաւորները հայեր պիտի ըլլային, անուամ թաւրիղի կամ Նոր Զուղայի հայ ոսկերիչ-արծաթագործ եւ թանկագին քարերու յղկիչներու մէջէն։

Ուրեմն, բնական պիտի ըլլայ խորհիլ որ յիշուած «առեւտրական ընկերութիւնը» Նոր Զուղայեցի գոհարավաճառ հայերու ընկերութիւն մըն էր, եւ անոնց մէկ մեծարժէք ու բազմաշխատ ձեռակերտն էր որ իբր լաւ նմոյշ մը Մոսկուա կը բերուէր ու կը ծախուէր Յարին։

Ինձի անձանօթ կը մնայ Զաքար Սարհաղեանի ոսկերիչ հօր մասին ոեւէ ծանօթութիւն։ Անոր ձեռակերտը եղած է Մոսկուա տարուած այդ մեծարժէք գահը։ Ոչ ալ որեւէ տեղեկութիւն հասած է Խոջա Զաքար Սարհաղեանի ձեռնարկի հետեւանքին մասին։

Սակայն, «1671 ամի ի փետրվար 14, նոյն աղայ Զաքար Սարհաղեան գրեաց զինդրագիր առ նոյն Կայսր Ալէքսի, յաղազս ունելոյ զչորհս պաշտպանութեան ի վերայ Փանոս գործակատարի իւրոյ որ մեծագումար ապրանք զնացեալ էր ի Ռուսաստան, եւ կրկնեալ էր զինդիր իւր սակս փութով վերադարձուցանելոյ ի Պարսկաստան, զՀայ պատկերահանն Պեակուցիր»։ («Պատ. Նոր Զուղայու», Ա. Մաս, էջ 175)։

Դժբախտաբար, վկայութեան ազրիւրը չի յիշուիր։ Որոշ է, որ Խոջա Զաքար յարաբերութիւն պահած է Ռուսաց արքունեաց հետ, ուր դրկած է նաեւ «զհայ պատկերահանն Պեակուցիր», որուն ետ զրկուիլ քանիցս ինդրած կ'երեւայ։

Ո՞վ է այս հայ նկարիչը, յայտնի չէ։ Ըստ երեւոյթին, անոր անունն ալ աղաւաղեալ մեղի հասած է։ Հետաքրքրական է, որ Հայ նրկարիչ կը զրկուի Պարսկաստանէն Մոսկուա։ Դեպտի անտելով Խոջա Զաքարի գոհարագործութեան եւ ոսկերչութեան կապերը՝ գուցէ «Պակուցիր»ը Պարսկահայ կիտուածանկարիչ մը ըլլայ։

Նոր Զուղայի գոհարավաճառներու, իրենց առեւտրական լեզուի ու կերպի մասին կարեւոր վաւերացումներ մը կը հանդիպինք Նոր Զուղայի ծանօթ գիւմարին մէջ։ Այդ վաւերացումներն բնագիրը եւ թարգմանութիւնը կուտամ ստորեւ.—

«Պատճառ գրոյս այս է որ թիվն 1118ումն Արեամ ամսի 25ումն եկինք Սուրաթ բանդարն դալալն մին դանայ արմազ էր բերել տվէլ Ազուխասէնց Յովհաննէսն. քաշն 159 ըռաթի. Յովհաննէսն արեկ իմ կուշտն ասաց թէ, ա՛յ Սիմոն դալալն եկէլայ մին քար այ բերել 159 ըռաթի ա՛յ առունք ընկերովի, ես ասացի լէվայ առունք ընկերովի, ասաց լէվայ առունք, կէսն ինձ կէսն քե, էս եղրարս մեր միջնումն ելաւ, հինգ վեց օրով յեանէ դալալն արեկ քարատէրն խտուրն՝ Յովհաննէսն ինձ կանչ աղարկէց, թէ եկ որ քարն մուշխաս առենք, զնացի Յովհաննէսէնց տունն նստանք, քարն քաշով 159 ըռաթի, գինն մուշխաս արարինք 11 հազար թուման. 15 օր վատայ փողն ասնք։ Մին գառբաֆ՝ քար ծախողին տուինք խալաթ, մին գառբաֆ դալալին, էտպէս առինք դուրս եկինք։ Յովհաննէսն ասաց ա՛յ Սիմոն, չունքի Սահակն ինձ խէտայ, մին հասայ ինձ, մին հասայ Սահակին, մին հասայ քե. ես ասացի թէ դոր օր զարար ենք արարէլ կէսն իմն այ կէսն քոնն, չումքի Սահակի անունն յառաջ յիշվէլ չի, դու լէվ քո հասէն ու Սահակն։ Երկու օրով հետնէ դալալն աղարկեցի թէ այ Պարոն Յովհաննէս, իմ ըռասաթ փողն աղարկեմ, ասաց թէ քարն յետ ամ տվէլ, էս ծախողէն՝ դալալէն էլ թախես արարի, որ յետ չէր տուէլ։ Ես վահմայ արարի Յովհաննիսին խէտ խօսկ առեին. չումքի էտպէս մեծ քար այ, չնի թէ Ավան յիմանայ՝ քարն ձեռաց զնայ, չումքի քարն զնամանայ Սպահան, գրեմ մեր Աղինուն որ Պարոն Աւետիկնայ Պարոն Մինասն՝ մեր դատաստանն առեն։ Յովհաննէսն դուրս ելաւ թէ զնայ դուջրաթն, Պարոն Մինասն մարդ աղարկեց Յովհաննէսն յետ բերին, թէ քարն ինձ խէտ ընկերովի առէլաս՝ վեռէլ զնման, մին սարվայ 2500 թուման շախ արեւ քարն